ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՕՀՊՄՔ-ՀԲՄԾՁԲ-21/01» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստի
(Հայտերի բացման նիստի ամփոփման և հայտերի գնահատման մասին)

ք. Երևան 12.01.2021թ.

Ժամը՝ 10.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թովմասյան
Անդամներ՝ Ս. Սարգսյան
Կ. Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գագինյան

1. **Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

1.1 **«ԵՕՀՊՄՔ-ՀԲՄԾՁԲ-21/01» ծածկագրով բաց մրցույթի (հրատապ)** հայտերը բացվել են փաստաթղթային ձևով «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքում, ք. Երևան, Արամ Մանուկյան 31 հասցեում, 2021 թվականի հունվարի 8-ին ժամը 10.00-ին:

1.2 «ԵՕՀՊՄՔ-ՀԲՄԾՁԲ-21/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ, համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության՝ հայտերի բացման նիստը կասեցվել է մինչև 2021 թվականի հունվարի 12-ը ժամը 10:00-ն.

- 08.01.2021թ. **էլեկտրոնային եղանակով ծանուցվել է** ընթացակարգի թիվ 1 չափաբաժնով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցին, այդ չափաբաժնով միաժամանակյա բանակցությունների մասին՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով, քանի որ ընթացակարգով գնումն իրականացվում է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ Պատվիրատուի 2021 թվականի կարիքների համար:

Միաժամանակյա բանակցությունները նշանակվել են «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքում, ք. Երևան, Արամ Մանուկյան 31 հասցեում, 2021 թվականի հունվարի 12-ին ժամը 10.00-ին:

1.4 Միաժամանակյա բանակցությունները, Հայտերի բացման ամփոփման և հայտերի գնահատման նիստը տեղի է ունեցել «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքում, ք.

Երևան, Արամ Մանուկյան 31 հասցեում, 2021 թվականի հունվարի 12-ին ժամը 10.00-ին: Նիստին (բանակցությանը) մասնակցել է ընթացակարգի «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ը ներկայացուցիչը:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

Մասնակիցների անվանումները	**Գտնվելու վայրը**
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 9/5
«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ 0097, Նորաշեն թղմ./Շ/27/72բն./
«Կարաս Ֆուդ» ՍՊԸ	ՀՀ, Ք. Երևան, Լենինգրադյան 1/1

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ և «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ հայտ պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգին համապատասխան:

«Կարաս Ֆուդ» ՍՊԸ հայտ պարունակող ծրարը կազմվել է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու սահմանված կարգին անհամապատասխան: Մասնավորապես անհամապատասխանություն է արձանագրվել Հրավերի 2-րդ մասի 3.2 կետի 1-ին ենթակետի պահանջների հետ՝ ընդհանրապես չի նշվել պատվիրատուի անվանումը: Վերոնշյալ անհամապատասխանությունը ենթակա չէ շտկման և համաձայն Հրավերի 2-րդ մասի 3.3 կետի՝ **գնահատող հանձնաժողովը 08.01.2021թ. թիվ 2 արձանագրությամբ «Կարաս Ֆուդ» ՍՊԸ հայտը հայտերի բացման նիստում մերժել է և ծրարը նույնությամբ վերադարձրել ներկայացնողին:**

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ և «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ ծրարներում պարունակող հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը առկա են, ներկայացված են 1 բնօրինակ, ստորագրված, կնքված և 2 պատճեններից:

5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ ներկայացրած փաստաթղթերից Բաց մրցույթին մասնակցելու մասին դիմում-հայտարարությունը (Հրավերի հավելված 1) և Գնային առաջարկը (Հրավերի հավելված 2) կազմված են սահմանված պահանջներին անհամապատասխան: Մասնավորապես անհամապատասխանություն է արձանագրվել Բաց մրցույթին մասնակցելու մասին դիմում-հայտարարության մեջ (Հրավերի հավելված 1) **«Կից ներկայացվում է ԼԵԲՐՈՆ ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի:» նախադասությունը** չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Գնային առաջարկի մեջ (Հրավերի հավելված 2) «**Ծառայության** անվանումը» սյունակի մեջ նշվել է «**Ապրանքի** անվանումը»: Հաշվի առնելով, որ համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան և այն ենթակա չէ շտկման, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի «ա»,«բ»,«գ»,«դ»,«ե» և «զ» պարբերություններով նախատեսված չէ որևէ հիմք հայտը չմերժելու՝ գնային առաջարկի անհամապատասխանության հիմքով, ապա ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և Հրավերի 1-ին մասի 8.2 կետի վերջին նախադասության հիմնավորմամբ «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ հայտը ենթակա է անբավարար գնահատման և մերժման: **Այս հիմքով գնահատող հանձնաժողովի 08.01.2021թ. թիվ 2 արձանագրությամբ «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:**

6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի վերաբերյալ

Հ/Բ	Մասնակցի անվանումը	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ			«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ		
	Չափաբաժնի անվանումը	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	ԱԱՀ** **/տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	ԱԱՀ** **/տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
	Ճաշարանային և հանրային սննդի ծառայություններ	311690250	-	311690250	832200000	166440000	998640000

7. Միաժամանակյա բանակցությունների արդյունքների մասին

Բանակցությանը մասնակցել է «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ը տնօրենի պաշտոնակատարը և ներկայացրած գնային առաջարկը չի նվազեցրել:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում գնման հայտով սահմանված գինը, և այդ հիմքով որոշվում ու հայտարարվում է ընտրված մասնակիցը:

8. Հանձնաժողովը 3 կողմ, 0 դեմ ձայնով, միաձայն որոշեց՝

Ա. «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «Կարաս Ֆուդ» ՍՊԸ հայտերը մերժել (գնահատող հանձնաժողովի 08.01.2021թ. թիվ 2 արձանագրություն)

Բ. Ընտրված մասնակից ճանաչել՝

- «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ին N 1 չափաբաժնով

Գ. Հաստատել «ԵՕՀՊՄՔ-ՀԲՄԾՁԲ-21/01» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հրապարակել:

9. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների, պատասխանների և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման մասին

Հայտի փոփոխություններ, հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Հանձնաժողովի հանջորդ նիստը տեղի կունենա Ընտրված մասնակցի կողմից որակավորման և պայմանագրի ապահովումը հիմնավորող փաստաթղթերը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգի ներկայացվելու հաջորդող օրը, ժամը 17:00-ին՝ «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքում, ք. Երևան, Արամ Մանուկյան 31 հասցեում:

Հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Թովմասյան

Անդամներ՝ Սամվել Սարգսյան

Կարինե Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սահակ Գագինյան

Հաստատված է
24 դեկտեմբերի 2020թ.-ին
Ընդամենը՝ 3 էջ
Կ. Տ

Հավելված 1
ՀՀ ֆինանսների
նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի
թիվ 229-Ն հրամանով

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ

Պատվիրատուի անունը՝ «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՕՀՊՄՔ--ՀԲՄԾՁԲ-21/01»

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ 1) Սահակ Գագինյան _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ

հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները, որով ներկայացվել է մրցույթի հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Նշագրություն
			ամիսը, ամսաթիվը	ժամը		
1	2	3	4	5	6	7
1.	«Լերոն» ՍՊԸ	Վստ. Պետական գրանցագրված վկայ. 08.01.2021թ. սկզ. ԱՏ0276788	08.01.2021թ.	9:49		
2.	«Ռեդի-Սթեյթ» ՍՊԸ	Վստ. Հայոց Ծերազարդյան վկայ. 08.01.2021թ. կթ 000052290	08.01.2021թ.	9:52		
3.	«Հարաս Ֆուդ» ՍՊԸ	Վստ. Թումանյանի փողոցում վկայ. 07.01.2021թ. սկզ. ԱՇ0253382	08.01.2021թ	9:58		Մրցույթին հայտ չեն ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ 1/Տեղ. ՀՀ-ում գրանց. թվագրերի մասնակիցներ